ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«11» փետրվարի 2019 թ. N 26-Ա

ՎԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վանիկ Հարությունյանին 2019 թվականի փետրվարի 11-ին, մեկ օրով, գործուղել Ք.Երևան՝ ՀՀ կառավարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և ՀՀ Վարչապետի կողմից կազմակերպված «Պետական աջակցություն ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը» համաժողովի աշխատանքներին մասնակցելու:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մարզպետի պարտակատարելիությունը
կատարող՝

Ն. Գրիգորյան
ք.Գավառ